ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՊԳՀԾՁԲ-19/31

ք. Երևան «23» 08 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր բարտուղար՝ Նաիրի Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՊԵՅՅՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սվետլանա Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձևնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3950000 (երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
Կառավարական տուն 2,	ՀՎՀՀ՝ 06955741
ՀՀ ֆինանսների նախարարության	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ՝ 16033017291900
Հ/Հ 900011059095	
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
Ն. Հարությունյան	Ս. Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	L.S.

Հավելված N 1
«23» 08 2019թ կնքված
ՍՊԳՀԾՁԲ-19/31 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը**	Չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը*
1	92621110/8	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	Ծառայությունը նախատեսում է «Լավագույն մարզական ընտանիք» 2019 թ. մրցույթի անցկացման համար նախատեսված անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերում: Միջոցառման նպատակը և խնդիրները. 1. «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) նպատակն է՝ անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում: 2. Մրցույթի խնդիրներն են՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ տարվող աշխատանքների խթանում, բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում, հաշմանդամային սպորտի զարգացման խթանում, սոցիալական հավասարության խթանում, հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում: 3. Մրցույթն անցկացվելու է տվյալ օրացուցային տարվա	դրամ	3950000	1	**1-ին փուլը՝ մարզային՝** Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում: **2-րդ փուլը՝ եզրափակիչ՝** Ծաղկաձոր քաղաքում:	**1-ին փուլը՝** ս.թ. սեպտեմբերի 10-ից, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրվանից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում մինչև ս.թ.

			սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին՝ 2 փուլով. 1-ին փուլը՝ **մարզային, 2-րդ փուլը՝ եզրափակիչ:** 1) **1-ին** փուլն անցկացվելու է Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում: 2) **2-րդ փուլը՝ եզրափակիչ փուլը** անցկացվելու է 3 օրում՝ Ծաղկաձոր քաղաքում: 4. Մրցույթի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի Նախարարության մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչությունը *(այսուհետ՝ ՄՍՖԴՔվ)*: 5. Մրցույթի 1-ին փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության համապատասխան վարչությունները և բաժինները: Եզրափակիչ փուլի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը: Երկու փուլերում մարզական միջոցառման ծրագիրը ներառում է՝ Վարժություն N 1 **Խաղային փոխանցավազք՝ 30 մ,** Վարժություն N 2 **Վարժություն բասկետբոլի գնդակով,** Վարժություն N 3 **Թենիսի գնդակի նետում,** Վարժություն N 4 **Խաղային փոխանցավազք՝ թենիսի գնդակով,** Վարժություն N 5 **Հեռացատկ (տեղից),** Վարժություն N 6 **Խաղային փոխանցավազք 80 մ (30մ+30մ+20մ),** ***«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման համար 1-ին և 2-րդ փուլերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցներին պարգևատրելու համար անհրաժեշտ են հետևյալ մրցանակները և պարագաները*** 1. Վկայագիր (հավաստագիր) 204 հատ 2.Վկայագիրի (հավաստագիր) համար գրպանիկով թղթապանակներ 60 հատ 3. Գուրզեր (բուլավա) 144 հատ 4.Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված պատվիրակությունների համար)՝ 3 հատ					սեպտեմբերի 22-ը: **2-րդ փուլը՝** ս.թ. հոկտեմբերի 6-ից մինչև ս.թ. հոկտեմբերի 9-ը:

			5. Օդաճնշիչ հրացանի փամփուշտ՝ 7000 հատ 6. Հրաձգության թիրախներ №10՝ 200 հատ 7. Ֆուտբոլի դարպասի ցանց՝ 4 հատ 8. Ռուլետկա՝ 2 հատ 9. Հուշանվեր՝ օրգանական ապակուց պատրաստված 35 հատ 10. Մեդալներ՝ 54 հատ 11. Նվերներ մասնակից երեխաներին՝ 72 հատ 12. Մրցավարներին՝ մարզաշապիկ՝ 32 հատ 13. Մրցավարներին՝ արևային գլխարկ՝ 32 հատ 14. Բասկետբոլի գնդակ՝ 28 հատ 15. Դարթս՝ 28 հատ 16. Երկար պարկ (3 մ x 1 մ չափսի)՝ 28 հատ 17. Ցատկի պարկ (բրեզենտե կտորից)՝ 28 հատ 18. Թենիսի գնդակ՝ 230 հատ 19. «ՀԱՂԹԱՆԱԿ» բառի տառեր՝ 4 լրակազմ 20. ՀՀ եռագույն դրոշ (1.8 սմ x 0.9 սմ)՝ 30 հատ 21. ՀՀ եռագույն դրոշ՝ չափսերը (10մ x 2.5մ)՝ 2 հատ 1.1 Վկայագրեր (Հավաստագիր), չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ. (**նմուշը կցվում է՝ նմուշ 1)**: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝ **1-ին փուլ՝ 12 հատ x 12 մարզ=144 հատ** **2-րդ փուլ՝ 60 հատ** 2.1 Վկայագրերի (Հավաստագիր) համար գրպանիկով թղթապանակներ, չափը՝ 32 x 22 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝ **2-րդ փուլ՝ 60 հատ** 3.1 Գուրզեր (բուլավա). Գուրզերը պետք է լինեն 40-50սմ բարձրությամբ, պլաստմասե կամ ռեզինե հումքից, ներքևի հատվածի տրամագիծը 25-30սմ: **1-ին փուլ՝ 12 հատ x 12 մարզ = 144 հատ** 4.1 Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակությունների համար) 65 սմ, 60 սմ և 55 սմ բարձրությամբ, միանման, մետաղական, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով՝ վրան գրված միջոցառման անվանումը և գրված տեղը: Տեսքը և տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ: **2-րդ փուլ՝ 3 հատ** 5.1 Օդամղիչ հրացանի փամփուշտ (շեշմա): 10 մարզ, Երևան քաղաք և Արցախ: **1-ին փուլ՝ 500 հատ x 12 մարզ = 6000 հատ**					

			2-րդ փուլ՝ 1000 հատ 6.1 Հրաձգության թիրախներ՝ թղթե N10 **200 հատ** 7.1 Ֆուտբոլի դարպասի ցանց (80սմ x 60սմ չափերի, պատրաստված անջրթափանց կտորից): **2-րդ փուլ՝ 4 հատ** 8.1 Երկար մետր՝ 50 կամ 100-մետրանոց (ռուլետկա) **2-րդ փուլ՝ 2 հատ** 9.1 Հուշանվեր՝ օրգանական ապակուց պատրաստված եզրափակիչ փուլի մրցումներին 1-ին, 2-րդ, 3-րդ տեղեր գրաված ընտանիքներին և պատվավոր հյուրերին: Չափսը՝ 12 սմ լայնությամբ, 1 սմ հաստությամբ, 20 սմ բարձրությամբ, պատվանդանով, (**2018 թ. նմուշը կցվում է՝ նմուշ 2**): **2-րդ փուլ՝ 35 հատ** 10.1 Մեդալներ. չափսը՝ 5-6 սմ տրամագծով x 0,3 սմ հաստությամբ, մետաղե ձուլվածքով, եռագույն ժապավենով՝ 80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից: **2-րդ փուլ՝ 54 հատ** 11.1 Նվերներ՝ մասնակից երեխաներին մարզահագուստ կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը կարմիր, եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև, կրծքավանդակի վերին ձախ մասում «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի **պատկերանշանը՝ ասեղնագործված, 5-8սմ տրամագծով, համաձայն նմուշ 3-ի**: 6-ից 8 տարեկան երեխաներ՝ 12 հատ 9-ից 11 տարեկան երեխաներ՝ 20 հատ 12-ից 14 տարեկան երեխաներ՝ 28 հատ 15-ից 16 տարեկան երեխաներ՝ 12 հատ **Ընդամենը 2-րդ փուլ՝ 72 հատ** 12.1 Մրցավարների համար բամբակյա կտորից ամառային շապիկ, գույնը՝ սպիտակ, «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի **պատկերանշանով (5-8սմ տրամագծով համաձայն նմուշ 3-ի):** **- Մարզաշապիկի չափսերը՝ XXL - 10 հատ, XL - 10 հատ, L - 6 հատ, M - 6 հատ:** **2-րդ փուլ՝ 32 հատ** 13.1 Մրցավարների համար արևային գլխարկ, գույնը և ձևը համաձայնեցնել նախարարության ՄՍՖԴՔ վարչության հետ: **2-րդ փուլ՝ 32 հատ** 14.1 Բասկետբոլի 1 գնդակ՝ կաշվից կամ փոխարինող հումքից, կլոր, նարնջագույն, N 5 կամ N 6 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 8 կտորից (պանել), բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար. **1-ին փուլ՝ 2 հատ x 12 մարզ= 24 հատ**					

			2-րդ փուլ՝ 4 հատ 15.1 Դարթս: Պատրաստված է խտացված բուսական մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են 1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից: 1-ին փուլ՝ 2 հատ x 12 մարզ =24 հատ 2-րդ փուլ՝ 4 հատ 16.1 Երկար պարկ (անջրթափանց կտորից) (պարկի լայնությունը 1 մետր, երկարությունը՝ 3 մետր, երկու եզրերը կարված օղակների համար): 1-ին փուլ՝ 2 հատ x 12 մարզ =24 հատ 2-րդ փուլ՝ 4 հատ 17.1 Ցատկի պարկ (բրեզենտե հաստ կտորից) (65 սմ տրամագծով, երկարությունը 110սմ): 1-ին փուլ՝ 2 հատ x 12 մարզ= 24 հատ 2-րդ փուլ՝ 4 հատ 18.1 Թենիսի գնդակ (Babolan կամ համարժեքը)՝ դեղին գույնի: 1-ին փուլ՝ 15 հատ x 12 մարզ= 180 հատ 2-րդ փուլ՝ 50 հատ 19.1 «ՀԱՂԹԱՆԱԿ» բառի տառերի տպագրում Ա-4 չափսի, երկկողմ լամինացված և թղթի վերևի հատվածից 1 սմ ներքև, կենտրոնական մասում ունենա 1 սմ տրամագծով անցք, իսկ «ՀԱՂԹԱՆԱԿ» բառի գունային համադրությունը պետք է արտացոլի ՀՀ եռագույն դրոշի գույները, տառերի չափսը՝ 22 սմ): 2-րդ փուլ՝ 4 լրակազմ 20.1 ՀՀ եռագույն դրոշ (90 սմ x 1,80 սմ)՝ անջրթափանց կտորից, եզրերը կարված: 2-րդ փուլ՝ 30 հատ Եռագույն դրոշ՝ անջրթափանց կտորից եզրերը կարված, երկու կողմից հաստ թելի անցկացում, երկու վերջավորությունները 8 սմ լայնությամբ կարված, խողովակի համար, չափսերը (10մ x 2,5մ): 2-րդ փուլ՝ 2 հատ **Մրցույթի 2-րդ՝ եզրափակիչ փուլի համար նախատեսված են՝** 1. **Ձայնային տեխնիկայի ապահովում՝** մարզադաշտում՝ • «Էլեկտրավոյզ» կամ համարժեք ֆիրմայի բարձրախոս – 6 հատ, առնվազն 3 ԿՎ հզորությամբ, ձայնի ճնշում- առնվազն 136 db, հաճախականություն- 50Hz-19KHz) • Ձայնի կառավարման վահանակ «Pioneer» ֆիրմայի					

			կամ համարժեք 1 հատ և 1 հատ դյուրակիր համակարգիչ /notebook/ 1 հատ. • Միկրոֆոն՝ 3 հատ հեռակառավարման. **3 օր** 2. **Շտապ բուժօգնության ծառայության ապահովում՝** մասնակից ընտանիքների անդամների և մրցավարների համար: **3 օր** 3. **Հաղորդավարի ծառայություն,** միջոցառման փակման օրը, ք. Ծաղկաձորում. **1 օր** 4. **Մարզադաշտի ապահովում Ծաղկաձորում** (մարզաբազայում կամ այլ նմանատիպ մարզադաշտում) (վազքուղիները նշագծված. խաղադաշտի խոտը հնձված, հարակից տարածքը բարեկարգված): **3 օր** 5. **Մարզադաշտի ձևավորման ծառայություն:** Մարզադաշտի և հարակից տարածքի ձևավորում դրոշակներով և պաստառներով), միջոցառման ավարտից հետո ապամոնտաժում և պահեստավորում: **2 օր** 6. **Պատվիրատուի կողմից տրամադրված վրանի կոնստրուկցիայի** հավաքում և քանդում, երկարությունը՝ 12մ, լայնությունը՝ 3մ, բարձրությունը՝ 3 մ: **1 լրակազմ x 2 օր** 7. **Գովազդային պաստառ (բաներից),** մեծ լոգոյով, (5x1,5մ. չափերի, եզրերը կրկնակի ծալված, մետաղե փոքրիկ օղակներով, օղակների հեռավորությունը միմյանցից 25սմ): Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ: **1 հատ** 8. **Գովազդային պաստառ (բաներից),** մեծ լոգոյով, (6x2.2մ. չափերի, եզրերը կրկնակի ծալված, մետաղե փոքրիկ օղակներով, օղակների հեռավորությունը միմյանցից 25 սմ): Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ: **5 հատ** 9. **Մետաղե լար.** 2-3 մմ տրամագծով; **100 մետր** 10. **Ավտոմեքենայի տրամադրում:** Բեռնատար տրանսպորտ 1-ին փուլի մարզագույքը տեղափոխելու համար՝ Երևան-Ստեփանակերտ-ՀՀ մարզկենտրոններ և 2-րդ եզրափակիչ փուլի մարզագույքն ու նվերները՝ Երևան-Ծաղկաձոր-Երևան): Մեքենաների քանակն ըստ անհրաժեշտության (1000 կմ): 11. **Պղնձե էլեկտրական լար՝** (մարզադաշտում)					

			առնվազն 2.5մմ հաստությամբ (սնուցման 3-4 կետերով) - **60 մետր** 12. **Օդամղիչ հրացանի ապահովում:** Հրացանի տրամաչափը 4,5 մմ, տեսակը՝ օդամղիչ, լիցքավորումը՝ մեկ լիցքով, քաշը՝ 2,9 կգ, երկարությունը 1095 մմ, փողի երկարությունը 450 մմ, հրացանի կոթը՝ փայտե կամ պլաստմասե, փողի ուժը /Փողային էներգիա/ 7.5 ջոուլ, կամ համանման-**4 հատ x 1 օր:** **Մրցավարական հանձնաժողովի և մրցավարների աշխատանքները ապահովելու համար անհրաժեշտ գրենական պիտույքներ՝** • Կաշվե թղթապանակ փափուկ կազմով և << զինանշանով, 35 սմ x 23 սմ չափսի-18 հատ • թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի-20 հատ • ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորություն)- 1 տուփ՝ 100 հատ • ծրար A5 ձևաչափի: Ծրարներ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար՝ սահմանված չափի և ձևի-300 հատ • պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, (սկոչ) 48մմ x 100մ, տնտեսական- մեծ-10 հատ • թղթե կպչուն ժապավեն 48 մմ x 100 մ չափսի, տնտեսական, մեծ, գլանափաթեթված ժապավեն սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018 - 0,030 մմ կամ 0,030 - 0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ- 10 հատ • հաշվասարք գրասենյակային (կալկուլյատոր) «CITIZEN» կամ համարժեքը- 2 հատ • թուղթ A4 ֆորմատի (21 x 29.7): A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210 x 297 մմ)- 2 տուփ • գրիչ գնդիկավոր՝ տարբեր գույների, (կապույտ, սև գույնի) -30 հատ • մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ՝ սև, համապատասխան կարծրությամբ- 20 հատ • Գրիչ գելային, 0,5 մմ ծայրով, կապույտ, սև և կարմիր գույների-3 հատ • Քարթրիջ HP LAZERJET 1020՝ տպիչ սարքի համար:					

			Տպագրական աշխատանքները իրականացնելու համար-1 հատ • Փչովի նիտրոն. սպիտակ ներկեր (բալոնչիկով) մարզադաշտում նշումներ կատարելու համար-4 հատ					

* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը կամ մոդելին հղումներ հանդիպելու դեպքում վերջինից հետո կարդալ «կամ համարժեք» բառերը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011059095
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար

_____ Ն. Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
ՀՎՀՀ՝ 06955741
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900

Տնօրեն՝

_____ Ս. Սարգսյան
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

1

Նմուշ 1

ԵՐԵՎԱՆԻ ԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Լուսավորության նախարարություն

Հավելված N 2
«23» 08 2019թ. կնքված
ՍՊԳՀԾՁԲ-19/31 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց, վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ <<Մասսայական սպորտ>> ծրագրի 4239 հոդվածից՝ ըստ ամիսների, այդ թվում				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110/8	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	3950000	3950000	3950000	3950000	3950000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011059095
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար

Ն. Հարությունյան
(ստորագրություն)

L.S.

ԿԱՏԱՐՈՂ
«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
ՀՎՀՀ՝ 06955741
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900

Տնօրեն՝

Ս. Սարգսյան
(ստորագրություն)